ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 98-րդ և 99-րդ հոդվածները, Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կողմից առաջարկվող «Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հայեցակարգային դրույթների մասին» Ազգային ժողովի հայտարարության նախագիծը՝ այն սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով:

Կից ներկայացվում են հայտարարության նախագիծը (հիմնական զեկուցող Արմեն Ռուստամյան), դրա հիմնավորումը, ինչպես նաև «Հայաստան» խմբակցության որոշումը (նիստի արձանագրությունից քաղվածքը):

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

11.04.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք խմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածով և 99-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ «Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հայեցակարգային դրույթների մասին» «Հայաստան» խմբակցության կողմից ներկայացվող Ազգային ժողովի հայտարարության նախագծին (կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական զեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

08.04.2022թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանի դրույթները եւ Հայաստանի անկախության մասին հռչակագրի պահանջները,

Վերահաստատելով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը կյանքի կոչելու հանձնառությունը,

Հաշվի առնելով

- Թուրքիայի հայատյաց և Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը,
- Քառասունչորսօրյա պատերազմին Թուրքիայի բացահայտ մասնակցության փաստը,
- Թուրք-ադրբեջանական տանդեմի «Շուշիի հռչակագրով» ամրագրված հակահայկական ռազմավարական նպատակներն ու պանթուրանական ծրագրերը,
- քաղաքական եւ տնտեսական էքսպանսիա իրականացնելու միջոցով տարածաշրջանում լիարժեք վերահսկողություն հաստատելու Թուրքիայի նպատակները,
- Հայաստանին աշխարհաքաղաքական, քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր-մշակութային մակարդակներում կենսական զիջումներ պարտադրելու միջոցով հայկական գործոնը վերացնելու Թուրքիայի վերջնանպատակը:

Համոզված լինելով, որ

- Հայաստանի եւ հայության կողմից կենսական զիջումներ ենթադրող որեւէ գործընթացի վերջնարդյունքը հայոց պետականության փլուզումն է,

- Հայաստանի, որպես ազգային եւ ինքիշխան պետության զարգացման երաշխիքը նրա աշխարհաքաղաքական նշանակության եւ սերունդների իրավունքների պահպանումն ու ամրապնդումն է,
- Հայաստանի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության եւ Արցախի լինելիության ու անվտանգության հարցերը փոխկապակցված են,
- Թուրքիան շարունակում է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումն օգտագործել իր եւ Ադրբեջանի պահանջները բավարարելու համար,
- Թուրքիան եւ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ վարում են էթնիկ ազգակցության եւ ուժի դիրքերից բխող միջազգային սկզբունքներին ու նորմերին հակասող քաղաքականություն և իրականացնում են «Մեկ ազգ՝ երկու պետություն» հայեցակարգը՝ Հայաստանի դեմ հանդես գալով երկու ճակատով:

Առ այդ

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը անհրաժեշտ է իրականացնել փուլային եղանակով՝ որպես մեկնակետ ընդունելով դիվանագիտական հարաբերությունների հաստատումը եւ Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակումը: Հետագա հարաբերությունները պետք է կառուցվեն նկատի ունենալով հետեւյալ հիմնարար սկզբունքները.

1. Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը՝ նախատեսվող պարտավորությունների ստանձման եւ դրանց կատարման ուղղությամբ, անհրաժեշտաբար պետք է ներդաշնակ լինեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 12.01.2010թ որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումներին եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին:

2. Հայաստան-Թուրքիա հարաբերություններում բացառել որևէ համաձայնություն, որը հարցականի տակ կդնի հայ ժողովրդի հայրենազրկման ու Ցեղասպանության իրողությունը, ինչպես նաեւ հայության հոգեւոր մշակութային ժառանգության կրողը լինելու իրավունքը:

3. Առաջնորդվել Հայաստանի եւ սփյուռքի միասնական կամքով՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու եւ Ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցում:

4. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների հարցը ենթակա է լուծման համաձայն միջազգային իրավունքի հիմնարար և համընդհանուր նորմերի:

5. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատումը որեւէ կերպ չի կարող խոչընդոտել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացմանը և այն երաշխավորելու Հայաստանի հանձնառության կատարմանը:

6. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատումը չի կարող ուղղակի կամ անուղղակի պայմանավորվել և ծառայեցվել Ադրբեջանի պահանջների բավարարմանը եւ թուրք-ադրբեջանական տանդեմի ծավալապաշտական եւ պանթուրանական ծրագրերի իրագործմանը:

7. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա պետք է նպաստի Թուրքիայում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

Հիմնավորում

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ձևավորման հարցը վերաբերում է մեր ժողովրդի համար կենսական բնույթ ունեցող, բազմաշերտ խնդիրներին: Այդ հարաբերությունների կարգավորման հարցը դուրս է զուտ երկկողմանի ձևաչափից և ունի ավելի լայն տարածաշրջանային և աշխարհաքաղաքական նշանակություն:

Հետևաբար, այդ հարաբերությունների կարգավորումը Հայաստանի և հայության անվտանգային պահանջներին և շահերին լիովին համահունչ իրականացնելը մնայուն համազգային պարտավորություն է, և անհրաժեշտ է պահպանել հայեցակարգված մոտեցում: Այս կարևորագույն գործընթացում իր ուղղակի մասնակցությունը պետք է ի սկզբանե ունենա խորհրդարանը:

Նկատի ունենալով, մի կողմից՝ Թուրքիայի ակնկալիքները՝ հասնելու իրենց բնույթով հակահայկական թուրք-ադրբեջանական միասնական ռազմավարական նպատակների իրագործմանը, մյուս կողմից՝ կայուն խաղաղության և բարի-դրացիական հարաբերությունների հաստատման գործընթացում ազգային պետական շահերի գերակայությունն ապահովելու Հայաստանի հանձնառությունը, անհրաժեշտ է առաջնորդվել կենսական զիջումները բացառող և հայության հավաքական կամքն արտահայտող փաստաթղթերով ամրագրված իրավա-քաղաքական նպատակադրումներով:

Սույն հայտարարության ընդունումն ԱԺ կողմից կնպաստի այդ գործում արձանագրելու ՀՀ հստակ դիրքորոշումն ու հանձնառությունը: